ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-7

ք. Վանաձոր «23» հունիսի 2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԶԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ղազումյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 2-րդ մասնաշենքի, 2/29 բազմաբնակարան շենքի 3-րդ մասնաշենքի տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2017 թվականի սեպտեմբերի 30-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը).

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 5.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 5): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 8299200 (ութ միլիոն երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից 1383200 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

9-րդ չափաբաժին 4050000 (չորս միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որից 675000 (վեց հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

10-րդ չափաբաժին 4249200 (չորս միլիոն երկու հարյուր քառասունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որից 708200 (յոթ հարյուր ութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 5 և N 5.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան	«ԱԶԿԱ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ք. Իջևան, Արցախյան 7
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 07618419
ՀՀ 900231751026	Հ/Հ 2476103794520000
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ	«ԱՇԲ բանկ» ՓԲԸ, Իջևանի մ/ճ
Ն. Սարգսյան	Ա. Գևորգյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-7» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-1

Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 2-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ, դրամ	
					Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	7
1	23-159	Ալիքավոր ա/g թերթերից կտուրի քանդում	մ^2	279.00	0.212	59.286
2	23-157	Պիպերի մետաղական թիթեղի քանդում	մ^2	11.50	0.103	1.189
3	8-300 գ-0.8	Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում	մ^3	0.800	26.220	20.976
4	8-300 գ-0.8	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ^3	0.40	26.220	10.488
5	8-300	Տանիքի փայտե էլեմենտների կառուցում, օգտագործելով նոր կողահատ փայտանյութ	մ^3	0.80	260.915	208.732
6	8-131	Ջրհորդանի փոխում 0.5մմ ներկված g/թիթեղով	մ	63.80	9.642	615.149
7		Կողահատ փայտանյութ ջրհորդանի կառուցման համար	մ^3	0.40	211.043	84.417
8	8-17-Բ	Պիպերի տախտակամածի փոխարինում և խտացում, օգտագործելով նոր փայտանյութ	մ^2	5.00	0.857	4.286
9		Կողահատ փայտանյութ պիպերի տախտակամածի փոխարինման և խտացման համար	մ^3	0.150	211.043	31.657
10	8-17-Բ	Օդափոխութքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով տախտակամածի կառուցում	մ^2	12.50	0.857	10.715
11		Կողահատ փայտանյութ օդափոխութքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների տախտակամածի կառուցման համար	մ^3	0.300	211.043	63.313
12	8-17-Բ	Կավարամածի քանդում և կառուցում, օգտագործելով նոր փայտանյութ	մ^2	52.00	0.857	44.573
13		Կողահատ փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ^3	0.60	211.043	126.626
14	9-24 4-1	Տանիքածածկույթի կառուցում ցինկապատ պրոֆիլավոր ներկված թիթեղով ԿՊ-21-0,5մմ	մ^2	279.00	5.770	1609.941
15	8-300	<<Սլուխովի>> պատուհանների վերանորոգում	մ^3	0.14	258.339	36.167
16	7-25	<<Սլուխովի>> պատուհանափեղկի կառուցում /ճաղաշարով/	հատ	2.00	4.797	9.593
17		Կողահատ փայտանյութ պատուհանափեղկի և ճաղաշարի կառուցման համար	մ^3	0.06	211.043	12.663
18		մեխ	կգ	1.00	0.551	0.551
19		ծխնիներ	հատ	4.00	0.483	1.934
20		շերտափեղկի փականի սարք	հատ	2.00	1.381	2.763
21	14-360	<<Սլուխովի>> պատուհանների յուղաներկում	մ^2	2.60	2.072	5.388
22	8-279	Պիպերի կառուցման 0,5մմ հաստ. գունավոր g/թիթեղով	մ^2	11.50	1.001	11.515
23		Գունավոր g/թիթեղ պիպերի կառուցման համար 0,5մմ հաստ.	մ^2	11.50	3.876	44.576
24	8-279	Օդափոխության հորանների և պարապետի պարագծով 0,5մմ հաստ. գունավոր g/թիթեղի տեղադրում	մ^2	29.20	1.001	29.238
25		Գունավոր g/թիթեղ օդափոխության հորանների և պարապետի համար 0,5մմ հաստ.	մ^2	29.20	3.876	113.183
26	8-279	<<Սլուխովի>> պատուհանների կողային մասերի երեսապատում 0,5մմ հաստ. ներկված	մ^2	9.20	1.001	9.212

		պատուհանների համար 0,5մմ հաստ.				
28	8-279	Պարապետի գլխնոցների տեղադրում 0,5մմ հաստ. գունավոր g/թիթեղից	մ^2	8.00	1.001	8.010
29		Գունավոր g/թիթեղ պարապետի գլխնոցների համար 0,5մմ հաստ.	մ^2	8.00	3.876	31.009
30	20-524	Գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների և պարապետի վրա գունավոր g/թիթեղից 0.5մմ	մ^2	6.80	5.679	38.617
31		Գլխնոցների ամրացման համար շերտավոր պողպատ 25*3մմ	մ	38.00	0.293	11.128
32		Պտուտակամեխ	կգ	2.00	1.439	2.879
33	8-282	Տանիքի մետաղական պաշտպանիչ ճաղաշարի կառուցում	1գծմ	73.00	0.127	9.255
34		Հեղույս M8X30	կգ	5.90	1.336	7.881
35		Մետաղական ծող Φ14	տն	0.253	548.712	138.824
36		Շերտապողպատ 30x7	մ	110.00	1.492	164.107
37	14-398	Մետաղական պաշտպանիչ ճաղաշարի յուղաներկում	մ^2	15.50	1.180	18.288
38	8-215-Բ	Ջրհոս խողովակների փոխումգունավոր g/թիթեղից Φ100	մ	120.00	3.070	368.441
39	8-227-Բ	Ջագարների փոխում գունավոր g/թիթեղից Φ100	հատ	8.00	3.890	31.122
40	8-219-Բ	Արմունկների փոխում գունավոր g/թիթեղից Φ100	հատ	8.00	2.077	16.617
41	23-77	Գոյություն ունեցող շին աղբի մաքրում և բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	3.40	1.712	5.819
42	23-226	Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	3.10	0.423	1.310
43	Գ130-3	Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	6.50	1.142	7.424
44	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ^3	8.40	6.878	57.777
45	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	1մ^2 մշակ մակ	322.00	0.225	72.535
46	6-30	Փայտե ճակտոնների կառուցում	մ^2	2.00	1.461	2.923
47		Փայտանյութ ճակտոնի կառուցման համար	մ^3	0.060	211.043	12.663
48	8-279	Ճակտոնների երեսապատում 0,5մմ հաստ. ցունավոր g/թիթեղով	մ^2	5.20	1.001	5.207
49		Գունավոր g/թիթեղ ճակտոնների երեսապատման համար 0,5մմ հաստ.	մ^2	5.20	3.876	20.156
50	26-52	Օդափոխության հորանների վերանորոգում թեթև բետոնով Վ-7.5	մ^3	0.20	57.118	11.424
51		Օդափոխության հորանների համար 1մմ հաստ. մետաղական թիթեղով խողովակ Φ120	մ	12.00	2.072	24.865
52	6-247 29-2 6-249 29-3	Պատերի շեպերի և սյուների տորկրետացում g/ավազային շաղախով 3սմ հաստությամբ	մ^2	16.400	8.001	131.221
53		Ռաբիցա ցանց d=1.8մմ	մ^2	16.400	0.499	8.178
54		Մետաղալար Br-5 ծպեղնաոտքերի ամրացման համար	տն	0.0083	544.874	4.522
55		Ճարմանդներ փայտե կոնստրուկցիաների ամրացման համար Φ10Al	տն	0.076	404.820	30.766
		Ընդամենը				4446.757
		Շահույթ 11%				489.143
		Ընդամենը				4935.901
		Ա.Ա.Հ. 20%				987.180
		Ամբողջը				5923.081

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-2

Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 3-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ. դրամ	
					Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	7
1	23-159	Ալիքավոր ա/g թերթերից կտուրի քանդում	մ^2	279.00	0.212	59.286
2	23-157	Պիպերի մետաղական թիթեղի քանդում	մ^2	11.50	0.103	1.189
3	23-157	Օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով թիթեղի քանդում	մ^2	30.80	0.103	3.184
4	8-300 գ-0.8	Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում	մ^3	1.10	26.220	28.842
5	8-300 գ-0.8	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ^3	0.60	26.220	15.732
6	8-300	Տանիքի փայտե էլեմենտների կառուցում, օգտագործելով նոր կողահատ փայտանյութ	մ^3	1.10	260.915	287.007
7	8-131	Ջրհորդանի փոխում 0.5մմ ներկված g/թիթեղով	մ	63.80	9.642	615.149
8		Կողահատ փայտանյութ ջրհորդանի կառուցման համար	մ^3	0.60	211.043	126.626
9	8-17-Բ	Պիպերի տախտակամածի փոխարինում և խտացում, օգտագործելով նոր փայտանյութ	մ^2	11.10	0.857	9.515
10		Կողահատ փայտանյութ պիպերի տախտակամածի փոխարինման և խտացման համար	մ^3	0.300	211.043	63.313
11	8-17-Բ	Օդափոխութքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով տախտակամածի կառուցում	մ^2	11.67	0.857	10.003
12		Կողահատ փայտանյութ օդափոխութքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների տախտակամածի կառուցման համար	մ^3	0.350	211.043	73.865
13	8-17-Բ	Կավարամածի քանդում և կառուցում, օգտագործելով նոր փայտանյութ	մ^2	68.60	0.857	58.801
14		Կողահատ փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ^3	0.80	211.043	168.835
15	9-24 4-1	Տանիքածածկույթի կառուցում ցինկապատ պրոֆիլավոր ներկված թիթեղով ԿՊ-21-0,5մմ	մ^2	279.00	5.770	1609.942
16	8-300	<<Սլուխովի>> պատուհանների վերանորոգում	մ^3	0.14	258.339	36.167
17	7-25	<<Սլուխովի>> պատուհանափեղկի կառուցում /ճաղաշարով/	հատ	2.00	4.797	9.593
18		Կողահատ փայտանյութ պատուհանափեղկի և ճաղաշարի կառուցման համար	մ^3	0.06	211.043	12.663
19		մեխ	կգ	1.00	0.551	0.551
20		ծխնիներ	հատ	4.00	0.483	1.934
21		շերտափեղկի փականի սարք	հատ	2.00	1.381	2.763
22	14-360	<<Սլուխովի>> պատուհանների յուղաներկում	մ^2	2.60	2.072	5.388
23	8-279	Պիպերի կառուցման 0,5մմ հաստ. գունավոր g/թիթեղով	մ^2	11.50	1.001	11.515
24		Գունավոր g/թիթեղ պիպերի կառուցման համար 0,5մմ հաստ.	մ^2	11.50	3.876	44.576
25	8-279	Օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների և պարապռտի պարագծով 0,5մմ հաստ. գունավոր g/թիթեղի տեղադրում	մ^2	29.20	1.001	29.238

27	8-279	<<Սլուխովի>> պատուհանների կողային մասերի երեսապատում 0,5մմ հաստ. ներկված g/թիթեղով	$մ^2$	9.20	1.001	9.212
28		Գունավոր g/թիթեղ <<Սլուխովի>> պատուհանների համար 0,5մմ հաստ.	$մ^2$	9.20	3.876	35.660
29	8-279	Պարապետի գլխնոցների տեղադրում 0,5մմ հաստ. գունավոր g/թիթեղից	$մ^2$	8.00	1.001	8.010
30		Գունավոր g/թիթեղ պարապետի գլխնոցների համար 0,5մմ հաստ.	$մ^2$	8.00	3.876	31.009
31	20-524	Գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների և պարապետի վրա գունավոր g/թիթեղից 0.5մմ	$մ^2$	6.80	5.679	38.617
32		Գլխնոցների ամրացման համար շերտավոր պողպատ 25*3մմ	մ	38.00	0.293	11.128
33		Պտուտակամեխ	կգ	2.00	1.439	2.879
34	8-282	Տանիքի մետաղական պաշտպանիչ ճաղաշարի կառուցում	1գծմ	73.00	0.127	9.255
35		Հեղույս M8X30	կգ	5.90	1.336	7.881
36		Մետաղական ձող Φ14	տն	0.253	548.712	138.824
37		Շերտապողպատ 30x7	մ	110.00	1.492	164.107
38	14-398	Մետաղական պաշտպանիչ ճաղաշարի յուղաներկում	$մ^2$	15.50	1.180	18.288
39	8-215-Բ	Ջրհոս խողովակների փոխումգունավոր g/թիթեղից Φ100	մ	120.00	3.070	368.441
40	8-227-Բ	Ջագարների փոխում գունավոր g/թիթեղից Φ100	հատ	8.00	3.890	31.122
41	8-219-Բ	Արմունկների փոխում գունավոր g/թիթեղից Φ100	հատ	8.00	2.077	16.617
42	23-77	Գոյություն ունեցող շին աղբի մաքրում և բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	3.40	1.712	5.819
43	23-226	Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	3.10	0.423	1.310
44	Գ130-3	Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 3կմ	տն	6.50	1.142	7.424
45	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	$մ^3$	8.40	6.878	57.777
46	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	$1մ^2$ մշակ մակ	322.00	0.225	72.535
47	6-30	Փայտե ճակտոնների կառուցում	$մ^2$	2.00	1.462	2.923
48		Փայտանյութ ճակտոնի կառուցման համար	$մ^3$	0.060	211.043	12.663
49	8-279	ճակտոնների երեսապատում 0,5մմ հաստ. ցունավոր g/թիթեղով	$մ^2$	5.20	1.001	5.207
50		Գունավոր g/թիթեղ ճակտոնների երեսապատման համար 0,5մմ հաստ.	$մ^2$	5.20	3.876	20.156
51	26-52	Օդափոխության հորանների վերանորոգում թեթև բետոնով Վ-7.5	$մ^3$	0.20	57.118	11.424
52		Օդափոխության հորանների համար 1մմ հաստ. մետաղական թիթեղով խողովակ Φ120	մ	12.00	2.072	24.865
53	6-247 29-2 6-249 29-3	Պատերի շեպերի և սյուների տորկրետացում g/ավազային շաղախով 3սմ հաստությամբ	$մ^2$	16.400	8.001	131.221
54		Ռաբիցա ցանց d=1.8մմ	$մ^2$	16.400	0.499	8.178
55		Մետաղալար Br-5 ծպեղնատոքերի ամրացման համար	տն	0.0083	544.874	4.522
56		ճարմանդներ փայտե կոնստրուկցիաների ամրացման համար Φ10AI	տն	0.076	404.820	30.766
			Ընդամենը			4693.700
			Շահույթ 11%			516.307
			Ընդամենը			5210.006

			Ա.Ա.Հ. 20%			1042.001
			Ամբողջը			6252.008

- Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԶԿԱ» ՍՊԸ
ք. Իջևան, Արցախյան 7
ՀՎՀՀ 07618419
Հ/Հ 2476103794520000
«ԱՇԲ բանկ» ՓԲԸ Իջևանի մ/ճ

Ա. Գրիգորյան

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 2-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու	2017 թվականի սեպտեմբերի 30
2	Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 3-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու	2017 թվականի սեպտեմբերի 30

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԶԿԱ» ՍՊԸ
ք. Իջևան, Արցախյան 7
ՀՎՀՀ 07618419
Հ/Հ [illegible]4520000
«ԱՇ[illegible]անի մ/6

Ա. [illegible]ազումյան
Կ.Տ.

Հավելված N 3
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-7» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

Աշխատանքի										
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
9	45611300	Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 2-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	4050000	4050000	4050000	4050000	4050000	4050000	4050000	4050000
10	45611300	Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 3-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	4249200	4249200	4249200	4249200	4249200	4249200	4249200	4249200

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԶԿԱ» ՍՊԸ
ք. Իջևան, Արցախյան 7
ՀՎՀՀ 07618419
Հ/Հ 2476103794520000
«ԱՇԲ-[illegible] ՓԲԸ, Իջևանի մ/ճ

[illegible]

Հավելված թիվ 4
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-7» ծածկագրով պայմանագրի

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Երաշխիքային ժամկետը
9	Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 2-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	2 տարի
10	Ալավերդի համայնքի Սանահին-Սարահարթ 2/29 բազմաբնակարան շենքի 3-րդ մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	2 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱԶԿԱ» ՍՊԸ
ք. Իջևան, Արցախյան 7
ՀՎՀՀ 07618419
Հ/Հ 2476103794520000
«ԱՇԲ [illegible] Իջևանի մ/ճ

Ա. [illegible]

L.S.

Հավելված թիվ 5
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-7» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5.1
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-7» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Լոռու մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____ գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն